



with financial support of the Russian Federation

«Եվրասիական տնտեսական միության երկրներում էներգիայի արդյունավետության խթանման կարգավորող շրջանակ» ՄԱԶԾ-ՌՏՀ տարածաշրջանային ծրագիր

Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան



Empowered lives. Resilient nations.

ՄԱԶԾ ծրագրային ոլորտը՝

Էներգետիկա և շրջակա միջավայր

Ծրագրի համարը՝

ՄԱԶԾ-ՌՏՀ/00102117-00104290

Ֆինանսավորող՝

Ռուսաստանի Դաշնություն – ՄԱԶԽ զարգացման տրաստային հիմնադրամ (ՌՏՀ)

Իրականացնող գործակալություն՝

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

Իրականացման եղանակ՝

ուղիղ կառավարում (DIM)

Տևողություն՝

2017-ի հոկտեմբերից 2019-ի հոկտեմբեր

Ծրագրի բյուջե՝

ՌՏՀ. 1,500,000 ԱՄՆ դոլար

Զուգահեռ ֆինանսավորում (ԱՄՆ դոլար)՝

Ղազախստան. 3,200,000
Հայաստան. 3,000,000
Բելառուս. 550,000

Հայաստանի կառավարություն (բնեղեն)՝ 200,000

Ղրղզստանի կառավարություն (բնեղեն)՝ 60,000

Կոնտակտային տեղեկություն՝ ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի պատասխանատու՝

Արմեն Մարտիրոսյան
armen.martirosyan@undp.org

Ծրագրի գրասենյակ՝

Հասցեն՝ 14 Պետրոս Ադամյան փ., Երևան, ՀՀ, 0010
Հ.՝ +374 60 530000 (լր. 104)
Ֆ.՝ +37410 543811
www.am.undp.org
www.nature-ic.am

Նախապատմությունը

ԵՏՄ երկրներում էներգիայի ընդհանուր սպառումը տարեկան կազմում է մոտ 130 մլրդ կՎտժ: Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական ենթակառուցվածքների կողմից էներգիայի սպառումը տարեկան կազմում է մոտ 39 մլրդ կՎտժ: Տարվա կտրվածքով 2-3% տնտեսական աճի սցենարի համաձայն, ԵՏՄ երկրներում էլեկտրաէներգիայի սպառումը 2017թ. տարեկան 130 մլրդ կՎտժ-ից կավելանա մինչև տարեկան 150 մլրդ կՎտժ՝ 2030թ. դրությամբ: Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների փոխանցումը և կիրառումը կարող է ապահովել էներգիայի սպառման մինչև 40% կամ տարեկան 15.6 մլրդ կՎտժ կրճատում, ինչը հավասարազոր է տարեկան մոտ 9 մլն տCO₂-ին համարժեք արտանետումների: Այս ներուժի իրացումը կարող է ապահովել կայուն տնտեսական աճ՝ առանց արտադրող հզորությունների զգալի աճի: Ներկայիս ներուժի 50%-ը կարող է իրագործվել մինչև 2030թ. էներգաարդյունավետության արդի ստանդարտների ներդրման շնորհիվ:

Նպատակը

Տարածաշրջանային ծրագրի հիմնական նպատակն է էներգաարդյունավետության ազգային համակարգերի ներդրման հզորացման միջոցով նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Եվրասիական տնտեսական միության երկրներում, այն է՝ Հայաստանում, Ղրղզստանում, Ղազախստանում և Բելառուսում: Ծրագիրը նաև, ըստ անհրաժեշտության, կնպաստի ԵՏՄ երկրների փորձաքննության ընթացակարգերի, ստանդարտների և պիտակների ներդաշնակեցմանը: Ծրագիրը հիմնականում կենտրոնանալու է ԵՏՄ տարածաշրջանում կարողությունների ձևավորմանը և աջակցությանը կառավարություններին, ստանդարտացման ինստիտուտներին, արտադրության, բաշխման, մանրածախ առևտրի, սպառողների և շրջակա միջավայրի շահագրգիռ կողմերին՝ նպաստելով էներգախնայողության առավել հնարավոր ծախսարդյունավետ միջոցների կիրառմանը:

Բաղադրիչները

Ծրագրի բյուջեն պլանավորված է ծածկելու երկրի բաղադրիչները Հայաստանի և Ղրղզստանի համար և տարածաշրջանային բաղադրիչը գործընկեր բոլոր երկրների համար՝ հետևյալ արդյունքներին հասնելու նպատակով.

1. Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության վերաբերյալ ժամանակակից ստանդարտների մշակում և ներդրում,
2. Փորձարկման լաբորատորիաների համակարգի ստեղծումը և ցածր արդյունավետության սարքավորումներից շուկան պաշտպանելու միջոցառումների իրականացումը.
3. Սպառողների իրազեկության բարձրացում էներգախնայող տեխնոլոգիաների տարբերակների և օգուտների վերաբերյալ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գնահատում:

Կանխատեսվող արդյունքը

Հասնել էներգախնայողության 20% ներուժի իրագործման, որը կազմում է 3.1 մլրդ կՎտժ/տարի Ծրագրի ավարտից հետո՝ շուկայի էներգաարդյունավետության պահանջների փոփոխության միջոցով: Ծրագրով նախատեսված սարքերի և սարքավորումների առնվազն 50% -ի և Ծրագրի շրջանակներում շուկայում ներկայացված երկրներում կգործեն էներգաարդյունավետության նվազագույն ստանդարտներով (MEPS) սահմանված պարամետրերը:

Շահառուները

Կենցաղային և արդյունաբերական էներգասպառող սարքերի օգտատերեր, էներգաարդյունավետ ստանդարտների մշակման և կիրառման մեջ ներգրավված մասնավոր հատված: Ծրագրի արդյունքները դրական ներդրում են մասնակից երկրների կառավարությունների ստանձնած պարտավորությունների կատարմանը ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի և փարիզյան համաձայնագրի ներքո:

